ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 12 հոկտեմբերի

Սիփէհդարը-Ազամի ուղարկած մէմուրը նոր է հասել Սալմաստ, որ յայտնի հարուստ ու բանապետ Հաջի Թաղին սովրաց ցիներից մի քանիսին բանտարկելով, մի քանիսին սպառնալով և մի քանիսին խոստումներ տալով՝ գիւղացիներին համաձայնութեան էր բերել, որ գիւղատիրոջ հասանելիքը տան և ապա վերցնեն իրանց մասը՝ ըստ պահանջման Հաջի Թաղիու։ Սիփէհդարի հրամանը տանող պատուիրակները մնացին ափ ի բերան հարկաւ, դէպքը սակայն տեղեկագրելով առաջնորդարանին և նահանգական իշխանութեան։ Այս անգամ փոխանորդ կարապետ քահանան խիստ լուզուով գործը յայտնեց Սիփէհդարին և պահանջեց, որ անպայման գիւղատէր Թաղիին բերել տայ Թաւրիզ՝ գործն այստեղ քննելու ու վճռելու։ մեքով։ Սիփէհդարն ուղարկեց երկրորդ հրամանը, որ գիւղատէրը գայ Թաւրիզ։ ինչչափ կաջողի այդ՝ կը զրեմ իր Ժամանակին։

Յայտնի կաղանաւոր Բաշիդ-ուլ-Դովլէ Քեաբիթ-խանը՝ Քէյվանի պատուհասը ոուսաց ձեռքով տարվեց Խոյ, ուր գտնվում է պատերազմա-դաշտային ատեանը։ Այնտեղ տարվել է նաև Լեան անունով մի հայ, որ կասկածվում է, թէ գներալ Ավարսկիի տերրորիստն է։ Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋ

—

Գրական-Գեղագիտական Սալօնը ստացել է շատ շնորհաւորական հեռագիրներ, ձաներ։ Հանդէսի շարունակութիւնը կայանալու է այսօր, ուրբաթ, ամսիս 19-ին, ուր Թիֆլիսից Էջմիածին գնացած պատգամաւորները կը զրուցեն Էջմիածնում և Օշականում եղած հանդէսների և որոշումների շուրջ։

Բ. Հ. Կուլտ. Մխիթեան նախագահ Կ. Խատիսեան հեռագրով ացայտ է յայտնում, որ հնարաւորութիւն չունի անձամբ ներկայ լինել հանդէսին, և ուղարկում է սրտագին շնորհաւորութիւններ ազգային մեծ տօնախմբութեան առիթով։

Տ. Սիրանոյշ հեռագրում է. «Պարծանքով ողջունում եմ խօսքի և տպագրութեան տօնը՝ հայրենի արուեստի և առաջադիմութեան անսպառ աղբիւրը»։

Պրոֆեսոր Եղիազարեանը հեռագրում է Կիեվից. «Ողջունում եմ մեծ Ժողովը, նշանակալից համայն ժողովրդի համար, տաղերի գիւտի տարեդարձով։ Մլի, ծաղկի և զօրանայ հայոց լեզուն և գրականութիւնը»։

Ստացված են շատ հեռագիրներ և «Աղբիւր-Տարագիր» աշխատակիցներից ու նրանց ընտանիքներից, օր.՝ տ. Վարվառէ Բալուզեանից։ Ցաւրիթեան Պետրոսեան ուղարկել էր ձօն-ոտանաւոր, որ կարդացվեց հանդիսում։ Թիֆլիսի Արքունական թատրոնի օպերային դեկավար Պալիով և օպերային խմբի բոլոր արտիստները ուղարկել էին նոյնպէս շնորհաւորութիւններ հեռագրով և նամակներով, ինչպէս և Արտիստական Ընկերուս դրամատիկ խմբի—Պ. Օ. Զարէչնիի դեկավարութեամբ—արտիստները և դիրեկցիան։

Կարդացվեցին և Ալ. Քալանթարի ու Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեանի հետեւեալ շնորհաւորութիւնները։

Ալ. Քալանթարի շնորհաւորութիւնը

Թիֆլիս, 11 հոկտեմբերի

Յարգելի պ. Տիգրան Նազարեան.

Դրաւիչ և գեղեցիկ տօնով է սկսվում այս տարվայ Գրական-Գեղագիտական Սալօնի առաջին երեկոյթը։

Գրական-Գեղագիտական Սալօնի համար կրկնակի թանգ պէտք է լինի մի տօն, որը նուիրված է հայկական գրերի գիւտի և հայ տպագրութեան յոբելեաններին։

Անկարող եմ ներկայ լինել այդ երեկոյթին, որովհետև մեկնում եմ դէպի Էջմիածին նոյն համակրելի տօնակատարութեան առիթով մասնակցելու հանրային հանդէսին։

Խորապէս համակրելով գրական ժողովների կազմվելուն և այնպիսի միջոցների ձեռնարկելուն, որոնք ժողովրդականացնէին հայ գրերի զարաւոր գոյութեան նուիրիչը, ցանկանում եմ աջողութիւն այս առաջին երեկոյթին, յոյս ունենալով որ նա կունենայ շարունակութիւն, և խոստանում եմ մի կողմից ապագայ երեկոյթներից մէկում ունենալ քանախօսութիւն մեր գրականութեան մի կարևոր երեոյթի մասին։

Յարգանքով՝ Ալ. Քալանթար

Ս. Տէր-Մելքիսեդեկեանի Նամակը

Կարս, 11 հոկտեմբերի

Յարգելի խմբագիր պ. Տ. Նազարեան

Դուք առանձին նամակով հրաւիրում էք մեզ հոկտեմբերի 12-ին բացվելիք Գրական-Գեղագիտական Սալօնի հանդիսին մասնակից լինելու և տեսնելու հայ տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի նախատօնակի սրբազան հանդէսը։ Արդարև երջանիկ կը լինէի ես, շատերի նախանձութիւնը վաստակած, շատերի երանութեան արժանացած, եթէ դպրոցական հանգամանքները, ուսուցչական պաշտօնս խոչընդոտ չը լինէին իմ ցանկութեան։ Երբ հրաւիրագիրը ստացայ, սիրտս թրթռում էր, ցանկանում էի թեւեր առնել, թռչել և ականատես լինել այդ համազգային մեծ տօնի սրբազան նախատօնակին։ Այո, սրբազան է այդ տօնը, մեծ է այդ նախատօնակը, համազգային է և ամեն հայի սրտին մտիկ է այդ հանդէսը։ Բայց ցաւում ենք, որ ապարէզ իջան հայեր, զրչի, դիրքի, հեղինակութեան տէր անհատներ, որոնք մնապարծ փառաբերութեամբ վարակված՝ երկպառակութիւն զցեցին ազգի մէջ, չնչատեցին այդ մեծ տօնի նշանակութիւնը, կուսակցութիւն ստեղծեցին և ամեն ջանք գործ դրին միաբանութիւնը խանգարելու և այդպիսի տգեղ վարմունքով մասամբ նսեմացրին տօնի վեհութիւնը։ Իրանց կիրքը, եսը, փառամոլութիւնը յագեցնելու համար ոչ մի ստոր միջոցի առաջ կանգ չառան։ Արդին հօրը չէ հնազանդվում, փառասէր զաւակները ուզում էին դաբերով սրբազործված էջմիածնի բարձրութիւնը իրանց կրքերին զոհեր։ Բայց դուք, պ. Նազարեան, ինչպէս շատ փաստեր ապացուցանում են, շուտ վհատողներից չէք։ դուք դարձեալ ապարէզ իջաք այդ հանդէսը փառաւոր կացուցանելու։ Կեցցէք դուք։

Սրտաբուխ և անկեղծ ցանկութեամբ ողջունում եմ ձեր գործը, ձեր հանդը և ձեր հանդէսը։ Երանելով և ողջունելով այդ սրբազան հանդիսին մասնակցող մեծարելի պարոններին, խորին շնորհակալութեամբ փակում եմ նամակս։ Կեցցէք դուք և ձեր հանդիսականները։

Մնամ կատարեալ յարգանօք՝

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Խանքենդ-աւան, 14 հոկտեմբերի

Այսօր բաւականաչափ երկսեռ բազմութեան ներկայութեամբ մատուցվեց հանդիսաւոր պատարագ և կատարվեց հոգեհան-